ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԱՊՁԲ-20-9/15-3»

ք. Երևան 30.12.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ստեփանյանի, ով գործում է «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **11 095 898.8/տասնմեկ միլիոն իննսունհինգ հազար ութ հարյուր իննսունութ ամբողջ ութ/ ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ

թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Արաբկիր 19փ. 6/75
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 22031196048200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ [illegible]
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 1
30.12.2019 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/15-3 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Լոտի անվանումը											
Հ/հ	CPV	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
1	33141182/558	Օրոգաստրալ զոնդ 28F ***SUMI***	***SUMI***	Օրոգաստրալ զոնդ ստամոքսի լվացման համար 28F 100 սմ: Պատրաստված է բարձրակարգ բժշկական ՊՎՔ-ից, թափանցիկ է, ունի դիստալ կենտրոնական և կողմնային անցքեր, պրոքսիմալ հատվածը կոնուսաձև է, լվացման ներարկիչի միացման համար:	հատ	500.00	60000.00	120.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	120.0	
2	33141182/559	Օրոգաստրալ զոնդ 30F ***SUMI***	***SUMI***	Օրոգաստրալ զոնդ ստամոքսի լվացման համար *30F 100* սմ: Պատրաստված է բարձրակարգ բժշկական ՊՎՔ-ից, թափանցիկ է, ունի դիստալ կենտրոնական և կողմնային անցքեր, պրոքսիմալ հատվածը կոնուսաձև է, լվացման ներարկիչի միացման համար:	հատ	500.00	60000.00	120.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	120.0	
3	33141182/560	Օռոֆարինգեալ օդամուղ N2 ***SUMI***	***SUMI***	Պատրաստված է հատուկ *PVC*-ից,սահուն-հարթ մակերեսով,կորացված եզրերով,սանացիոն անցքով: Չափսը *2/9սմ/*	հատ	495.00	99000.00	200.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	200.0	
4	33141182/561	Օռոֆարինգեալ օդամուղ N3 ***SUMI***	***SUMI***	Պատրաստված է հատուկ *PVC*-ից,սահուն-հարթ մակերեսով,կորացված եզրերով,սանացիոն անցքով: Չափսը *3/10սմ/*	հատ	495.00	59400.00	120.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	120.0	
5	33141182/562	Օռոֆարինգեալ օդամուղ N4 ***SUMI***	***SUMI***	Պատրաստված է հատուկ *PVC*-ից,սահուն-հարթ մակերեսով,կորացված եզրերով,սանացիոն անցքով: Չափսը *4/11սմ/*	հատ	495.00	247500.00	500.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	500.0	
6	33171100/552	Էնդոտրախեալ փողի ֆիքսատոր մեծ ***SUMI***	***SUMI***	Օռալ/նազալ Էնդոտրախեալ փողի ֆիքսատոր փափուկ, չկտրվող, առանձին փաթեթավորումով	հատ	1466.66	219999.00	150.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	150.0	
7	33141221/532	Ներշնչափողային	***SUMI***	Ներշնչափողային խողովակի	լրակազմ	37000.00	1295000.00	35.0	ք.Աբովյան,	35.0	

		խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 35FR **SUMI**		հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ *35FR:* Տրախեալ մանժետի տրամագիրը՝23մմ , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ *18*մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-հատ, Ստիլետ *1* հատ, ներկառուցված *T* կոնեկտոր *2* հատ, կոնեկտոր *15mm 2* հատ, Ճաձև կոնեկտոր *1* հատ, Պտտվող կոնեկտոր *1* հատ, Արտածման ծայրադիրներ *4* հատ:					Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա		
8	33141221/533	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 35FR **SUMI**	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ *35FR :* Տրախեալ մանժետի տրամագիրը՝23մմ , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ *18*մմ :Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-հատ, Ստիլետ *1* հատ, ներկառուցված *T* կոնեկտոր *2* հատ, կոնեկտոր *15mm 2* հատ, Ճաձև կոնեկտոր *1* հատ, Պտտվող կոնեկտոր *1* հատ, Արտածման ծայրադիրներ *4* հատ::	լրակազմ	37000.00	1295000.00	35.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	35.0	
9	33141221/534	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 37FR **SUMI**	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ *37FR:* Տրախեալ մանժետի տրամագիրը՝*25*մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ *18*մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-հատ, Ստիլետ *1* հատ, ներկառուցված *T* կոնեկտոր *2* հատ, կոնեկտոր *15mm 2* հատ, Ճաձև կոնեկտոր *1* հատ, Պտտվող կոնեկտոր *1* հատ, Արտածման ծայրադիրներ *4* հատ:	լրակազմ	37000.00	1480000.00	40.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40.0	
10	33141221/535	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ	լրակազմ	37000.00	1480000.00	40.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40.0	

		համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 37FR **SUMI**		37FR:Տրախեալ մանժետի տրամագիրը՝25մմ , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ : Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-1հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Ճաձև կոննեկտոր 1 հատ, Պտտվող կոննեկտոր 1 հատ, Արտածծման ծայրադիրներ 4 հատ:							
11	33141221/536	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 39FR **SUMI**	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 39FR: Տրախեալ մանժետի տրամագիրը՝30մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 20մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-1հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Ճաձև կոննեկտոր 1 հատ, Պտտվող կոննեկտոր 1 հատ, Արտածծման ծայրադիրներ 4 հատ:	լրակազմ	37000.00	1295000.00	35.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	35.0	
12	33141221/537	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 39FR **SUMI**	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 39FR: Տրախեալ մանժետի տրամագիրը՝30մմ , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 20մմ :Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-1հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Ճաձև կոննեկտոր 1 հատ, Պտտվող կոննեկտոր 1 հատ, Արտածծման ծայրադիրներ 4 հատ:	լրակազմ	37000	1295000.00	35.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	35.0	
13	33141221/538	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 41FR	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 41FR: Տրախեալ մանժետի տրամագիրը՝32մմ , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 22մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-1հատ,	լրակազմ	36666.66	1099999.80	30.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30.0	

		SUMI		Ստիլետ *1* հատ, ներկառուցված *T* կոննեկտոր *2* հատ, կոննեկտոր *15mm 2* հատ, *Y*աձև կոննեկտոր *1* հատ, Պտտվող կոննեկտոր *1* հատ, Արտածծման ծայրադիրներ *4* հատ							
14	33141221/539	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ծախ 41FR **SUMI**	**SUMI**	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ծախ *41FR:* Տրախեալ մանժետի տրամագիծը՝*32մմ* , բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ *22մմ* : Կազմը՝ Ոտբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-*1*հատ, Ստիլետ *1* հատ, ներկառուցված *T* կոննեկտոր *2* հատ, կոննեկտոր *15mm 2* հատ, *Y*աձև կոննեկտոր *1* հատ, Պտտվող կոննեկտոր *1* հատ, Արտածծման ծայրադիրներ *4* հատ:	լրակազմ	37000.00	1110000.00	30.0	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30.0	

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:

թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

**Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ Տնօրեն՝
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	[illegible]ՅԱՆ

Հավելված N 2
30.12.2019 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/15-3 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի															
Հ/հ	CPV	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33141182/558	Օրոգաստրալ զոնդ 28F	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	33141182/559	Օրոգաստրալ զոնդ 30F	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3	33141182/560	Օռոֆարինգեալ օդամուղ N2	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
4	33141182/561	Օռոֆարինգեալ օդամուղ N3	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
5	33141182/562	Օռոֆարինգեալ օդամուղ N4	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	33171100/552	Էնդոտրախեալ փողի ֆիքսատոր մեծ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
7	33141221/532	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 35FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
8	33141221/533	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 35FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
9	33141221/534	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 37FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
10	33141221/535	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

		Ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 37FR													
11	33141221/536	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 39FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
12	33141221/537	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 39FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
13	33141221/538	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 41FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
14	33141221/539	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 41FR	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ
Տնօրեն՝

ԱԼԱՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 3
30.12.2019թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/15-3 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրությամբ գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՅԸ. 12.2019թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/15-3 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ _____ -ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն